ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

№24/24/10883-19

Ձեր _____ «29» 04 2019թ.

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն»
ՀԿ-ի նախագահ Շ. Դոյդոյանին

Ի պատասխան Ձեր 25.04.2019թ. 342-04 գրության՝

Պարզաբանում ենք, որ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով սահմանված «տեղեկություն» հասկացության իմաստով այդպիսիք հանդիսանում են կոնկրետ անձի, առարկայի, փաստի, հանգամանքի, իրադարձության, եղելության, երևույթի վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված կարգով ստացված և ձևավորված տվյալները, մինչդեռ փաստաթուղթը (կամ դրա պատճենը) ընդհամենը այդ տեղեկության նյութական կրիչ է: Այլ կերպ ասած, տեղեկությունը փաստաթղթի բովանդակությունն է, դրանում պարունակվող տվյալը, այլ ոչ թե փաստաթուղթն ինքնին, հետևապես Ձեր կողմից հայցվող փաստաթղթերը հնարավոր է նույնականացնել հենց դրանց բովանդակությամբ:

Այսպիսով, ՀՀ ոստիկանությունը կոնկրետ փաստաթուղթ՝ դրա պարունակությամբ (կոնկրետ տեղեկությամբ) նույնականացված, օրենսդրության շրջանակում կարող է տրամադրել, եթե մատնանշվի այդպիսին:

Միաժամանակ, հայտնում ենք, որ այս առնչությամբ վարչական մարմնի գործողությունների իրավաչափությունը կարող եք վիճարկել դատական կարգով:

Պետ, ոստիկանության գնդապետ **Ա. Մարգարյան**